ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

ԳԼԽԱՎՈՐ ՊՈՂՈՏԱՅԻ ՍԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ

■ Մրցույթի նպատակն է բացահայտել այնպիսի քաղաքաշինական և ծավալատարածական լուծումներ, որոնք հնարավորություն կընձեռեն ներդաշնակ համակցությամբ այդ հատվածում իրականացնել նախատեսվող թատրոնի շենքը, օրգանական տարածական կապ ստեղծելով Սարյան փողոցի և Գլխավոր պողոտայի միջև:

■ Նախագծում անհրաժեշտ է ապահովել հետևյալ ճարտարապետահատակագծային պահանջները.

ա) Գլխավոր պողոտայից Հրազդանի ձոր տանող թունելների օդափոխությունը, տարածական ուղիղ կապը և դրանցում հետիոտնի անարգել շարժումը,
բ) թատրոնի շենքի 300 տեղանոց դահլիճի բնականոն գործունեության համար բոլոր նորմատիվ պահանջները,
գ) ջրային մակերեսների վերականգնման և կանաչ տարածքների ստեղծման հնարավորությունը,
դ) նշված տարածքի նվազագույն կառուցապատումը և բարեկարգումը,
ե) թատրոնի շենքում նախատեսել ոչ ավել, քան մեկ ստորգետնյա հարկ՝ ապահովելով մետրոյի հեռանկարային շինարարության հնարավորությունը:

■ Մրցութային նյութերի գրաֆիկական ներկայացման նկատմամբ հատուկ պահանջներ չեն սահմանվում: Ցանկալի է աշխատանքային մանրակերտերի ներկայացումը:

■ Մրցույթին ներկայացվող էսքիզային նախագծերը պետք է առավելագույնս բացահայտեն ճարտարապետական մտահղացումը, ուղղված՝ վերը նշված խնդիրների լուծմանը:

■ Ընտրված լավագույն երեք /3/ աշխատանքները պարգևատրվում են խրախուսական մրցանակներով՝ յուրաքանչյուրը 400000–ական դրամ:

Ծանոթություն

❖ Ճարտարապետական հորինվածքի մշակման մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

❖ Մրցութային հանձնաժողովը կձևավորվի Երևանի քաղաքապետին կից Քաղաքաշինական խորհրդի ճարտարապետության և գեղարվեստի հանձնաժողովների՝ մրցույթին չմասնակցող անդամների կազմից:

❖ Մրցութային առաջարկությունները ներկայացվում են ոչ ուշ, քան 2012թ. հոկտեմբերի 1–ը հետևյալ հասցեով՝ Երևանի քաղաքապետարան՝ Արգիշտի փողոց N1, 2–րդ հարկ:

❖ Գծագրերի աջ կողմի վերևի անկյունում վեցանիշ թվով նշվում է նախագծի ծածկագիրը, շրիֆտի բարձրությունը՝ 15մմ։

❖ Գործը ներկայացնելիս, փակ ծրարի մեջ համապատասխան ծածկագրով ներկայացվում է հեղինակը կամ հեղինակային կազմը։

❖ Մանրամասների համար այցելեք Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքը։

ԿՏՐՎԱԾՔ Մ 1:100



ՃԱԿԱՏ (չափագրություն) Մ 1:100



ՀԱՏԱԿԱԳԻԾ (չափագրություն) Մ 1:100




Սարյան փող.
Մեսրոպ Մաշտոցի պողոտա
Մաշտոցի պող.
Ղազար Փարպեցի
Դուշինցի փող.
Գրիգոր Լուսավորչի փող.
Սասնոյ Ծռերի փող.
ավտոտնակներ
կառուցվող
շին. հրապ.
ջրավ.
խանութ
ավտոտն.